



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ՀՐԱՄԱՆ թիվ 01-03/52

ք.Երևան

25 փետրվարի 2020 թ.

**ՄԵԽԱՆԻԿԱՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ և ԴԻԶԱՅՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (փոփոխություններով) 54-րդ կետի 12-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀԱՊՀ Գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 4-ի նիստի թիվ 46 որոշմամբ հաստատված «ՀԱՊՀ ինստիտուտի տնօրենի ընտրության կարգ»-ի 14-րդ կետի 2-րդ պարբերության դրույթները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հրապարակել ՀԱՊՀ Մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի և դիզայնի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի տեղակալման համար դիմած հետևյալ թեկնածուներին:

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆԻ՝

- ծնված 1959թ., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի և դիզայնի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
- 1981թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Մեխանիկամեքենաշինական ֆակուլտետը, եղել է Լենինյան կրթաթոշակառու:
- Համալսարանում աշխատում է 1984 թվականից՝ որպես Ավտոմոբիլների ամբիոնի ասիստենտ, դոցենտ, 1990-2006 և 2007-2016 թթ.՝ Տրանսպորտային համակարգերի ֆակուլտետի/դեպարտամենտի դեկան/վարիչ, համատեղությամբ նաև Ավտոմոբիլների ամբիոնի վարիչ, 2019թ. հոկտեմբերից ՄՏԴ ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար:
- Հրատարակել է 75 գիտական և 20 ուսումնամեթոդական աշխատանքներ:
- Պարգևատրվել է ՀՀ նախագահի և ԿԳՆ Շնորհակալագրերով, ՀԱՊՀ ՈՍԿԵ հուշամեդալով և Վաստակագրով:

2. Գագիկ Վարդանի Մուսայեյանի թեկնածության քննարկումն իրականացնել Մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի և դիզայնի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում (նիստի նախագահ՝ պրոռեկտոր Մ.Բաղդասարյան)՝ ս.թ. փետրվարի 28-ին ժամը 14:30-ին՝ ՀԱՊՀ 3-րդ մասնաշենքի թիվ 3319 լսարանում: